Արձանագրություն N 3
Քաղցրավենիքի նվեր փաթեթների ձեռքբերման «ԵՔ-ՀՄԱԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

14.12.2018թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բաղդիշյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Ղազարյան /գնահատող/, Ա.Տեր-Թորոսյան /գնահատող/
Մ. Վաթինյան /բացող/, Ա. Մարտիրոսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության և առաջին տեղ զբաղեցնող մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի մասին

(Ա. Բաղդիշյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Բաղդիշյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Բաղդիշյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ **«ԵՔ-ՀՄԱԱՊՁԲ-18/6»** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին և վերջինիս ներկայացնել **Քաղցրավենիքի նվեր փաթեթների մատակարարման** պայմանագիր կնքելու առաջարկ:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ա. Բաղդիշյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:40-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ..... Ա. Բաղդիշյան

Անդամներ՝ ..... Մ. Վաթինյան

..... Ա.Տեր-Թորոսյան

..... Է. Ղազարյան

..... Ա. Մարտիրոսյան

Քարտուղար՝ ..... Ա. Համբարձումյան